

<i>Համարը</i> N 551	<i>Տեսակը</i> Մայր
<i>Տիպը</i> Որոշում	<i>Կարգավիճակը</i> Գործում է
<i>Սկզբնաղբյուրը</i> ՀՀՊՏ 30.09.99./25(91)	<i>Ընդունման վայրը</i> Երևան
<i>Ընդունող մարմինը</i> ՀՀ կառավարություն	<i>Ընդունման ամսաթիվը</i> 31.08.1999
<i>Ստորագրող մարմինը</i> ՀՀ Վարչապետ	<i>Ստորագրման ամսաթիվը</i> 31.08.1999
<i>Վավերացնող մարմինը</i> ՀՀ Նախագահ	<i>Վավերացման ամսաթիվը</i> 31.08.1999
<i>Ուժի մեջ մտնելու ամսաթիվը</i> 10.10.1999	<i>Ուժը կորցնելու ամսաթիվը</i>

Կատարել է փոփոխություններ հետևյալ փաստաթղթերում՝	Յուրաքանչյուր փոփոխվողին համապատասխանող ինկորպորացիան՝
ՀՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄ ... (06.04.1991 - 10.10.1999)	ՀՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄ ... (10.10.1999 - 10.10.1999)

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՀՀ-ՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՆՇԱՆԱՎՈՐ ԳՈՐԾԻՉՆԵՐԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«ՎԱՎԵՐԱՑՆՈՒՄ ԵՄ»
 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
 ՆԱԽԱԳԱՀ Ռ. ՔՈՉԱՐՅԱՆ
 31 օգոստոսի 1999 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

31 օգոստոսի 1999 թվականի N 551
 քաղ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՆՇԱՆԱՎՈՐ ԳՈՐԾԻՉՆԵՐԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչների հիշատակը հավերժացնելու նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է**.

- Հաստատել Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը (կցվում է):
- Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության նախարարների խորհրդի 1991 թվականի ապրիլի 6-ի «Պետական, հասարակական, մշակույթի և գիտության գործիչների հիշատակը հավերժացնելու կարգի մասին» N 270 որոշումը:

**Հայաստանի Հանրապետության
 վարչապետ**

Վ. Սարգսյան

*Հաստատված է
 ՀՀ կառավարության 1999 թվականի
 օգոստոսի 31-ի N 551 որոշմամբ*

Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՆՇԱՆԱՎՈՐ ԳՈՐԾԻՉՆԵՐԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում է Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչների հիշատակը հավերժացնելու նպատակով պետական և համայնքների տարածքներում ու հասարակական վայրերում հուշարձանների (վեհարձան, կոթող, անդրի, կիսանդրի, հուշաքար, հուշատախտակ) իրականացման (նախաձեռնման, որոշման ընդունման, նախագծման և կառուցման) կարգը:

2. Հուշարձանի իրականացումը կարող են նախաձեռնել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը, Հայաստանի Հանրապետության կառավարությունը, Հայաստանի Հանրապետության նախարարությունները, գերատեսչությունները, պետական կառավարման տարածքային ու տեղական ինքնակառավարման մարմինները, կազմակերպությունները, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորները և առանձին քաղաքացիներ:

Հուշարձանի իրականացման վերաբերյալ առաջարկությունը նախապես համաձայնեցվում է պետական և հասարակական նշանավոր գործիչ կամ նրա առաջին հերթի ժառանգների ու համապատասխան համայնքի ավագանու (Երևանում՝ Երևանի քաղաքապետի) հետ և Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի միջոցով ներկայացվում տվյալ գործի գործունեության ոլորտի համապատասխան կառավարման հանրապետական մարմին, որը Հայաստանի Հանրապետության համապատասխան մարզպետին (Երևանում՝ Երևանի քաղաքապետին) է ներկայացնում գործչին նվիրված հուշարձանի իրականացման վերաբերյալ առաջարկություն՝ նշելով հուշարձանի տեսակը, տեղադրման վայրը, պատվիրատուին և ֆինանսավորման աղբյուրների մասին:

Հայաստանի Հանրապետության համապատասխան մարզպետը (Երևանում՝ Երևանի քաղաքապետը) նպատակահարմարության դեպքում ընդունում է որոշում հուշարձանի իրականացման վերաբերյալ:

3. Հուշարձանի նախագծային ու շինարարական աշխատանքների ֆինանսավորումը կարող է կատարվել տարբեր աղբյուրներից՝ ինչպես Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի և համայնքների բյուջեների միջոցների հաշվին ու կազմակերպությունների, առանձին քաղաքացիների կողմից, այնպես էլ տարբեր ֆինանսական աղբյուրների համատեղ մասնակցությամբ:

4. Հայաստանի Հանրապետության համապատասխան մարզպետի (Երևանում՝ Երևանի քաղաքապետի) որոշման հիման վրա հուշարձանի իրականացման որոշակի տեղի (հրապարակ, պողոտա, փողոց, շենք և այլն) ընտրության և հետագա իրականացման, ինչպես նաև համապատասխան նախագծի մշակման մրցույթի կազմակերպման դեպքում դրանց մասին որոշումն ընդունում է համայնքի ղեկավարը (Երևանում՝ Երևանի քաղաքապետը):

5. Հուշարձանի նախագծի մշակումն ու հաստատումը, շինարարության թույլտվությունը, կառուցումը, ավարտի ձևակերպումը և պահպանումը կատարվում են Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հուշարձանի ճարտարապետաշինարարական նախագծերը (բացի կիսանդրիներից, հուշաքարերից և հուշատախտակներից) մինչև հաստատումը սահմանված կարգով համաձայնեցվում են Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության, իսկ պատմության և մշակույթի հուշարձանների, դրանց պահպանական գոտիների, պատմական միջավայրի և պատմամշակութային արգելոցների տարածքներում հուշարձանների իրականացման դեպքում նաև Հայաստանի Հանրապետության պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության վարչության հետ:

6. Հուշարձանների վրա նախատեսվող մակագրությունների տեքստը Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի միջոցով համաձայնեցվում է պետական և հասարակական նշանավոր գործիչ գործունեության ոլորտի համապատասխան պետական մարմնի հետ: